

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն  
Թ Ա Ղ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ն Ե Ր Ո Ւ  
Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ի Հ Ա Յ Ո Ց Թ Ե Մ Ի

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն  
Ե Ի Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր Ո Ւ Ն

Վերամշակուած եւ վաւերացուած  
Ազգ. Գաւառական Ժողովի  
20 Յունիս 1998-ի Ա. Նստաշրջանի Դ. նիստին

## ԳԼՈՒԽ Ա.

### ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ

- Յօդ. 1- Թաղական Խորհուրդը կը կազմուի այն թաղին կամ շրջանին մէջ, ուր եկեղեցի կայ եւ սոյն եկեղեցին ալ իր սեփական ժողովուրդը ունի:
- Յօդ. 2- Իւրաքանչիւր Թաղական Խորհուրդ իր թաղին ժողովուրդին կողմէ կ'ընտրուի: Ան կը բաղկանայ ըստ տեղւոյն, 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Սոյն Խորհուրդի բոլոր ժողովներուն կը նախագահէ աւագերէց քահանան, առանց ձայնի իրաւունքի: Իր բացակայութեան, զինք կը փոխարինէ երկրորդ քահանան, եթէ կայ:
- Յօդ. 3- Հայ Առաքելական Եկեղեցոյ պատկանող ամէն անհատ, առանց սեռի խտրութեան, որ 20 տարին բոլորած է եւ ընտրութեան իրաւունքէն դատականօրէն զրկուած չէ, իրաւունք ունի մասնակցելու Թաղական Խորհուրդի ընտրութեան, պայմանաւ որ սահմանուած ժամանակի մէջ վճարած ըլլայ իր Ազգային Տուրքը:
- Թաղական Խորհուրդի անդամ կրնայ ընտրուիլ Հայ Առաքելական Եկեղեցոյ զուակ ամէն անհատ, առանց սեռի խտրութեան, որ 30 տարին բոլորած է, բարոյական վարկ կը վայելէ իր թաղին մէջ եւ դատականօրէն զրկուած չէ ընտրելու իրաւունքէն:
- Յօդ. 4- Ընտրական աշխատանքները կատարելու համար, Քաղաքական Ժողովի հրահանգով, շրջանաւարտ Թաղական Խորհուրդը կը կազմէ ընտրական յանձնախումբ մը, իր կազմին վրայ աւելցնելով 3-5 հոգի թաղին ազգայիններէն:

Ընտրական յանձնախումբին կը նախագահէ եկեղեցւոյ աւագերէց քահանան:

Յօդ. 5- Եթէ շրջանաւարտ կամ առժամեայ Թաղական Խորհուրդը չ'ուզէր մասնակցիլ ընտրական աշխատանքներուն, Քաղաքական Ժողովը, Եկեղեցւոյ աւագերէց քահանայի նախագահութեամբ, կը յառաջացնէ ընտրական յանձնախումբ մը՝ բաղկացած թաղեցի 6 ազգայիններէ:

Յօդ. 6- Քուէարկութիւնն ու քուէահամարը կը կատարուին համաձայն Քաղաքական Ժողովին կողմէ դրկուած ընտրական հրահանգներուն:

Յօդ. 7- Ընտրական աշխատանքները աւարտելուն պէս, ընտրական յանձնախումբը իր տեղեկագիրը կը պատրաստէ եւ ստորագրելով կը դրկէ Քաղաքական Ժողովին:

Յօդ. 8- Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը, քննելէ ետք ստացուած տեղեկագիրը, կը վաւերացնէ ընտրութիւնը՝ 8 օրուան պայմանաժամէ վերջ:

Յօդ. 9- Թաղական Խորհուրդի պաշտօնավարութեան շրջանը 4 տարի է: Շրջանաւարտ Թաղային Խորհուրդի անդամները վերընտրելի են, բացի այն պարագայէն, երբ Թաղական Խորհուրդը լուծուած է Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին կողմէ եւ անոր անդամները զրկուած են վերընտրուելու իրաւունքէն:

Յօդ. 10- Թաղական Խորհուրդի անդամ մը, երբ առանց բանաւոր պատճառի 3 անգամ բացակայի հերթական նիստերէն, ազդարարութիւն կը ստանայ ժողովին կողմէ: Եթէ յաջորդ նիստին դարձեալ բացակայի առանց բանա-

ւոր պատճառի, անոր կը դրկուի ազդարարութիւն մը ժողովին կողմէ, որուն մէջ կը ծանուցուի որ եթէ յաջորդող նիստին բացակայի, ինքնաբերաբար հրաժարեալ պիտի համարուի:

*ԾԱՆՕԹ:* Եթէ պատահի որ ատենապետը ըլլայ նոյն պարագայի մէջ գտնուողը, ժողովի որոշումով կ'ենթարկուի նոյն կանոնին, նոյն ձեւով:

Յօդ. 11- Եթէ տարուան շրջանը աւարտելէ առաջ Թաղական Խորհուրդի անդամներէն որեւէ մէկը հրաժարի, Թաղական Խորհուրդը պարտաւոր է անմիջապէս տեղեկացնել Քաղաքական Ժողովը: Եթէ հրաժարեալ անդամներուն թիւը 3-ի հասնի, Քաղաքական Ժողովը քննելէ ետք ստեղծուած կացութիւնը, ի հարկին կրնայ նոր ընտրութեան հրահանգ տալ՝ Խորհուրդին կազմը ամբողջացնելու համար կամ, խորհրդակցաբար մնացեալ Թաղականներուն եւ թաղի ազգայիններուն, նշանակել առժամեայ անդամներ մինչեւ նոյն ժամանակաշրջանի աւարտը:

Յօդ. 12- Եթէ թաղական Խորհուրդ մը սահմանեալ ժամանակէն առաջ ամբողջութեամբ կամ մեծամասնութեամբ հրաժարի, պարտաւոր է իր նիւթաբարոյկան գործունէութեան տեղեկագիրը պատրաստել եւ ներկայացնել Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին՝ հրաժարման յաջորդող տասը օրերու ընթացքին:

Յօդ. 13- Հրաժարեալ կամ լուծուած թաղական խորհուրդին տեղ Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը կը յառաջացնէ նշանակովի Թաղական Խորհուրդ մը՝ մինչեւ նորի մը ընտրութիւնը, որ պէտք է տեղի ունենայ առաւելագոյնը մինչեւ 6 ամիս:

Յօդ. 14- Եթէ թաղական խորհուրդ մը կամ անոր անդամներէն ոեւէ մէկը ամբաստանութեան տակ գտնուի, Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը

կրնայ կախակայել Խորհուրդը կամ անհատը, մինչև քննութեան արդիւնքն ու անկէ բխած վերջնական որոշումը:

Յօդ. 15- Եթէ թաղի մը կամ շրջանի մը մէջ բացառիկ կացութիւններու հետեւանքով կարելի չըլլայ օրինաւոր ընտրութիւններ կատարել, Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը կը նշանակէ առժամեայ թաղականութիւն մը:

Յօդ. 16- Հին եւ նոր թաղականութիւններու միջեւ փոխանցումը տեղի կ'ունենայ նոր թաղականութեան ընտրութենէն անմիջապէս ետք: Հին թաղականութիւնը նորին կը փոխանցէ իր եւ իրեն ենթակայ բոլոր մարմիններուն (Տիկնանց Յանձնախումբ, Դպրաց Դաս, ե.ն.) արխիւները, գոյքերը, հաշիւները:

Յօդ. 17- ա- Թաղականութիւնը՝ ընտրեալ թէ նշանակեալ, իր առաջին նիստին կ'ընտրէ իր դիւանը՝ Ատենապետ, Ատենադպիր, Հաշուապահ եւ Գանձապահ:

բ- Թաղականութեան անդամները հաւաքաբար պատասխանատու են թաղականութեան գործունէութեան:

## ԳԼՈՒԽ Բ.

### ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՊԱՇՏՕՆՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Յօդ. 18- Թաղական Խորհուրդի պաշտօնն է.
- ա- Իր թաղի ժողովուրդին ազգային գործերու մատակարարութիւնը:
  - բ- Եկեղեցւոյ հոգատարութեան եւ անոր պայծառութեան համար ծառայութիւնը:
  - գ- Թաղային ծխական վարժարանի հոգատարութիւնը:
  - դ- Թաղեցիներու զաւակներուն ազգային դաստիարակութեան ապահովումը:
  - ե- Աղքատներու խնամակալութիւնը:
  - զ- Թաղեցիներու մէջ պատահած վէճերու քննութիւնը եւ խաղաղարարութիւնը:
  - է- Ազգային Վարչութեան կողմէ տրուած որոշումներու եւ հրահանգներու գործադրութիւնը:
- Յօդ. 19- Բացի դպրոցի պարագայէն, Թաղական Խորհուրդը վերոյիշեալ պաշտօնները կը վարէ ինքը անձամբ եւ կամ իր կողմէ նշանակուած յանձնախումբերու միջոցաւ:
- Յօդ. 20- Իւրաքանչիւր եկեղեցի կ'ունենայ Աշքատախնամ Մարմին մը թաղի ջրատրներուն օգնելու համար, որ կը նշանակուի Թաղական Խորհուրդին կողմէ եւ համարատու է անոր:

- Յօդ. 21- Իւրաքանչիւր եկեղեցի կ'ունենայ Եկեղեասէր Տիկնանց Յանձնախումբ մը, որ կը նշանակուի թաղականութեան կողմէ եւ կը վաւերացուի Առաջնորդ Հօր կողմէ: Ան համարատու է Թաղական Խորհուրդին:
- Յօդ. 22- Թաղական Խորհուրդը ամէն տարեգլուխի պարտի փակել իր նիւթական հաշիւները եւ յաջորդող 15 օրուան ընթացքին ներկայացնել տարեկան հաշուեկշիռը Տնտեսական Խորհուրդին:
- Յօդ. 23- Թաղական Խորհուրդը իր պաշտօնավարութեան աւարտէն նուազագոյնը ամիս մը առաջ, պարտի Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին ներկայացնել իր քառամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը:
- Յօդ. 24- Իւրաքանչիւր Թաղական Խորհուրդ պարտի ունենալ իր թաղին քարտէսը եւ ծխականներուն լրիւ ցանկը՝ այբենական կարգով:
- Յօդ. 25- Թաղական Խորհուրդը պարտի գործակցիլ Տնտեսական Խորհուրդի հաշուեքննիչին հետ, անոր տրամադրելով պահանջուած բոլոր տոմարներն ու հաշիւները:

## ԳԼՈՒԽ Գ.

### ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

#### 1- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԵՏ

- Յօդ. 26- Իւրաքանչիւր եկեղեցի կ'ունենայ քահանայ հայր մը կամ քահանայ հայրեր՝ համաձայն շրջանի ծխականներուն թիւին: Մէկէ աւելի քահանայի պարագային, եկեղեցւոյ ծուխերը կը բաժնուին անոնց միջեւ հաւասար համեմատութեամբ:
- Յօդ. 27- Քահանայ հայրերը գործակիցներ եւ օժանդակներ են թաղական խորհուրդներուն՝ եկեղեցական, վարչական եւ ծխական գործերուն մէջ:
- Յօդ. 28- Աւագերեցը պատասխանատու է եկեղեցւոյ կարգ ու կանոնին, եւ հսկիչը սրբազան արարողութեանց:
- Յօդ. 29- Մէկէ աւելի քահանայ ունեցող եկեղեցիներու մէջ կը կիրակուի հերթական շաբաթի դրութիւնը:
- Յօդ. 30- Քահանայ հայրեր իրենց կրօնական-եկեղեցական պարտաւորութեանց համար համարատու են Թեմիս Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովին:



Յօդ. 31- Քահանայ Հօր մը նշանակումը՝ եկեղեցիին համար, կը կատարուի թաղականութեան գրաւոր դիմումին վրայ, ուղղուած կրօնական Ժողովին: Կրօնական Ժողովը, յետ քննութեան, կը հաստատէ թեկնածուին նշանակումը:

Եկեղեցոյ համար երկրորդ կամ երրորդ քահանայի մը նշանակման պարագային, Թաղականութեան դիմումնագրին վրայ անհրաժեշտ է ունենալ նաեւ ստորագրութիւնը արդէն իսկ գործող քահանային կամ քահանայ հայրերուն:

Երբ նշանակուելիք թեկնածուն աշխարհական է, Կրօնական Ժողովը անոր արժանաւորութիւնը քննելէ եւ հաստատելէ ետք, իր կարգին կը խնդրէ Առաջնորդ Հօրմէն ձեռնադրել զայն քահանայ՝ խնդրոյ առարկայ եկեղեցոյ համար:

Յօդ. 32- Ուել Քահանայ կամ բարձրաստիճան եկեղեցական, առանց Թեմիս Առաջնորդի արտօնութեան, չի կրնար հրաւիրուիլ եկեղեցի մը՝ ծիսակատարութիւն եւ պաշտամունք կատարելու համար:

Յօդ. 33- Քահանայ Հայր մը Թեմէս դուրս ճամբորդելու համար, պէտք է ունենայ Թաղական Խորհուրդի հաւանութիւնը եւ ստանայ Առաջնորդ Հօր արտօնութիւնը:

Յօդ. 34- Իւրաքանչիւր Քահանայ Հայր, համագործակցութեամբ Թաղական Խորհուրդի, պատասխանատու է իր խնամքին յանձնուած ծուխերուն կրօնական եւ եկեղեցական հոգածութեան: Ան պարտաւոր է ծիսական այցելութիւններով սատարել ընտանիքներու կրօնական դաստիարակութեան, խաղաղ գոյակցութեան եւ հաշտարար դեր կատարել ընտանեկան վեճերու առիթով:

Յօդ. 35- Իւրաքանչիւր եկեղեցի կ'ունենայ իր դպրապետն ու դպրաց դասը, որոնք կ'ունենան իրենց ներքին կանոնադրութիւնը, վաւերացուած Կրօնական ժողովէն:

Յօդ. 36- Դպրապետն ու դպրաց դասը վարչականօրէն ենթակայ են Թաղական Խորհուրդին, իսկ ի պաշտօնէ՝ Թեմիս պատկառելի Կրօնական ժողովին: Անոնց նախագահն է եկեղեցոյ քահանան կամ աւագերէցը: Նիւթական գետնի վրայ, անոնք համարատու են Թաղական Խորհուրդին:

2- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԵՏ

Յօդ. 37- Թաղական Խորհուրդը համարատու է ենթակայ է Քաղաքական ժողովին, որուն հրահանգներուն է ցուցմունքներուն պարտաւոր է ենթարկուիլ:

Յօդ. 38- Քահանայ հայրերուն պաշտօնին հետ կապ ունեցող հարցերուն համար, Թաղական Խորհուրդը կը դիմէ Ազգային Վարչութեան Խառն ժողովին (Կրօնական էւ Քաղաքական):

Յօդ. 39- Ծուխերու սահմանները ճշդելու էւ վերատեսութեան ենթարկելու իրաւասութիւնները կը պատկանին Ազգային Վարչութեան Խառն ժողովին:

3- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԵՏ

Յօդ. 40- Իր հոգատարութեան տակ գտնուող դպրոցին համար, Թաղական Խորհուրդը կը կազմէ Հոգաբարձութիւն մը՝ բաղկացած՝ 3-5-7 ուսումնական անձերէ: Թաղականութիւնը կ'ունենայ իր ներկայացուցիչը Հոգաբարձութեան մօտ, խորհրդակցական ձայնով:

Հոգաբարձուներու ցանկ մը կ'առաջարկուի Թաղականութեան կողմէ Ուսումնական Խորհուրդին, որուն վաւերացումէն ետք, Առաջնորդ Հօր պաշտօնական գրով ենթակաները կը նշանակուին հոգաբարձութեան անդամ եւ Թաղականութեան ատենապետին կողմէ կը հրաւիրուին Ա. նիստի՝ ընտրելու համար իրենց դիւանը:

Թաղական Խորհուրդը նամակով մը դիւանի ընտրութեան արդիւնքը կը հաղորդէ Ուսումնական Խորհուրդին՝ առ ի վաւերացում ու հաստատում:

Յօդ. 41- Եթէ Հոգաբարձութիւնը որեւէ պատճառով իր ժամանակէն առաջ հրաժարի, Թաղական Խորհուրդը պարտաւոր է նոր կազմ մը առաջարկել Ուսումնական Խորհուրդին:

Եթէ Թաղական Խորհուրդը չկարենայ Հոգաբարձութեան նշանակումը փութացնել, Ուսումնական Խորհուրդի պարտաւորութիւնն է, յետ ազդարարութեան, անմիջապէս առժամեայ Հոգաբարձութիւն մը նշանակել, որպէսզի վարժարանը անխնամ չմնայ:

Առժամեայ Հոգաբարձութեան նշանակումէն ետք, եթէ Թաղականութիւնը նոր կազմ մը առաջարկէ, Ուսումնական Խորհուրդը կրնայ զայն նկատի ունենալ, առաջարկուած անուններէն մի քանի հասրը աւելցնելով նշանակուած առժամեայ կազմին վրայ:

Յօդ. 42- Իւրաքանչիւր Հոգաբարձութիւն պարտաւոր է վարժարանի խնամատարութիւնը վարել՝ Համաձայն Ազգային Վարժարաններու կանոն-

նագրութեան եւ Ուսումնական Խորհուրդի ցուցմունքներուն: Ան համարատու է, հաշուական գետնի վրայ՝ Թաղականութեան, իսկ ուսումնական գետնի վրայ՝ Ուսումնական Խորհուրդին:

Տնօրէնը պատասխանատու է թէ՛ Հոգաբարձութեան եւ թէ ուղղակի Ուսումնական Խորհուրդին:

Յօդ. 43- Եթէ Թաղական Խորհուրդ մը ժամանակէն առաջ հրաժարի, Հոգաբարձութիւնը կը շարունակէ իր աշխատանքը մինչեւ իր շրջանին վերջ գտնելը:

Յօդ. 44- Թաղական Խորհուրդը պարտաւոր է գործակցիլ Հոգաբարձութեան հետ այն բոլոր հարցերուն համար, որոնք կը շահագրգռեն դպրոցը:

Յօդ. 45- Թաղական Խորհուրդը պարտաւոր է դպրոցին համար յատկացուած ազգապատկան եկամուտներուն գուտ հասոյթը ամբողջութեամբ փոխանցել Հոգաբարձութեան կամ խնամակալութեան:

Յօդ. 46- Թաղական Խորհուրդը պարտաւոր է Հոգաբարձութեան կողմէ իրեն ներկայացուած դպրոցական պիտճէն նկատի ունենալ եւ իր պիտճէն գումար տրամադրելով օգնել դպրոցին:

Թաղական Խորհուրդի բերելիք նպաստը եթէ անբաւարար նկատուի Հոգաբարձութեան կողմէ, այս վերջինը կրնայ դիմել Ուսումնական Խորհուրդին, որ իր կարգին խորհրդակցութեան կը հրաւիրէ Տնտեսական Խորհուրդի, Թաղականութեան եւ Հոգաբարձութեան ղիւանները, քննելու հարցը եւ ճշդելու Թաղական Խորհուրդի տրամադրելիք նպաստին գումարը:

4- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԵՏ

Յօդ. 47- Թաղական Խորհուրդը կը տնօրինէ Եկեղեցւոյ սնտուկը, որուն մուտքերն են՝ թաղի ժողովուրդին կողմէ վճարուած թաղական տուրքը (իւղագին), եկեղեցւոյ եկամուտները (Հոգեհանգիստ խնդրողին նուէրին 45%-ը եւ Հոգեհանգիստին մասնակցողներուն 100%), զանազան նուէրները, ազգապատկան կալուածներու եկամուտները եւայլն: Անոր ելքերն են՝ պաշտօնեաներու թոշակները, եկեղեցւոյ պայծառութեան համար կատարուող ծախքերը, Ազգային Առաջնորդարանին վճարելիք ծախսաբաժինը, աղքատներու տրուած օգնութիւնները, դպրոցին վճարուած տարեկան յատկացումները եւ քահանայ հայրերուն բժշկական ապահովութեան ծախսաբաժինը:

Յօդ. 48- Թաղական Խորհուրդը պարտաւոր է, եթէ կտակներ կան, անոնց մայր օրինակը դրկել Ազգային Առաջնորդարան եւ պահել կտակներու արձանագրութեան համար յատուկ տոմար մը:

Յօդ. 49- Թաղական Խորհուրդը պէտք է ունենայ կալուածական մանրամասն տոմար մը, ինչպէս նաեւ արժեքաւոր իրեղէններու եւ մնայուն գոյքերու յատուկ թուագրուած գոյացուցակ մը (Inventory), որուն մէջ կ'արձանագրուին, թուական կարգով, բոլոր գոյքերը իրենց գնման թուականով եւ գինով: Երբ գոյք մը կը փճանայ, անոր փճացումը հաստատող արձանագրութիւն մը կը ձգուի համապատասխան տոմարին մէջ՝ գոյքապահին եւ ատենապետին ստորագրութեամբ եւ օրուան թուականով:

Տոմարներու, հաշիւներու եւ գոյքերու գոյացուցակին փոխանցումը նորընտիր Թաղական Խորհուրդին կը կատարուի պաշտօնապէս Տնտեսական Խորհուրդի լիազօր ներկայութեան: Փոխանցման համապատասխան ստորագրութիւնները կը ձգուին տոմարներուն մէջ:

Յօդ. 50- Թաղական Խորհուրդը պարտավոր է թաղին մեջ եղած ծնունդներու, մկրտութեանց, ամուսնութեանց եւ մահերու արձանագրութիւնները պահել, իւրաքանչիւրը առանձին տոմարի մեջ:

Թաղական Խորհուրդը պարտավոր է, համաձայն Տնտեսական Խորհուրդի ցուցմունքներուն, զանոնք տեղեկացնել Ազգային Առաջնորդարան:

Յօդ. 51- Թաղական Խորհուրդը պէտք է ըստ կարելոյն դանսատուն ունենայ իր յարաբերութիւններուն համար:

Յօդ. 52- Թաղական Խորհուրդը պարտավոր է եկեղեցւոյ եւ վարժարանի հասոյթներուն եւ կալուածներուն պահպանութեան ու բարգաւաճման հոգ տանիլ:

Յօդ. 53- Թաղական Խորհուրդը բոլոր կալուածաթուղթերուն մայր օրինակը պէտք է դրկէ Ազգային Առաջնորդարան, պահելով կրկնօրինակը:

Յօդ. 54- Թաղական Խորհուրդը ոեւէ կալուծական գնում եւ վաճառում չի կրնար ընել առանց Առաջնորդ Հօր, Քաղաքական Ժողովի եւ Կալուածոց Տեսչութեան հաւանութեան եւ Տնտեսական Խորհուրդի գիտացութեան:

Յօդ. 55- Թաղական Խորհուրդը դրամական փոխառութիւն եւ փոխատուութիւն չի կրնար ընել՝ առանց Տնտեսական Խորհուրդի հաւանութեան, այլապէս կատարուած փոխառութիւնը եւ փոխատուութիւնը իր անդամներուն անձնական պարտքը կը համարուին:

- Յօդ. 56- Վերոյիշեալ յօդուածին հիման վրայ ռեւէ փոխաստուութիւն եւ պարտաթուղթ պէտք է կրեն Թաղական Խորհուրդի կնիքը եւ իր դիւանի անդամներուն ստորագրութիւնը:
- Յօդ. 57- Թաղական Խորհուրդի հաշիւները կ'արձանագրուին համաձայն Տնտեսական Խորհուրդի ցուցմունքներուն:
- Յօդ. 58- Թաղական Խորհուրդի հաշիւները պէտք է պահուին ամենայն բժախընդրութեամբ: Բոլոր մուտքերը պէտք է ստացագիրներու հիման վրայ ըլլան: Բոլոր ելքերը պէտք է համապատասխան վաւերաթուղթ ունենան: Մուտքերը եւ ելքերը պէտք է, օրը օրին, տոմարին մէջ արձանագրուին:
- Յօդ. 59- Թաղական Խորհուրդի գանձապահը պատասխանատու է սնտուկի ելեւմուտքին: Սնտուկին բացը իր անձնական բացը կը համարուի:
- Յօդ. 60- Թաղական Խորհուրդի ընթացիկ ծախսերէն դուրս կատարուելիք վճարումները պէտք է որոշուին ժողովին կողմէ: Բոլոր ծախսաթուղթերը պարտին կրել ատենապետին եւ գանձապահին ստորագրութիւնը:
- Յօդ. 61- Թաղական Խորհուրդի գանձապահը՝ ընթացիկ ծախսերու համար, իր սնտուկին մէջ կրնայ պահել առաւելագոյնը 500,000 լիբ. ոսկի. իսկ յաւելեալ գումարները Թաղականութեան անունով ի պահ կը դրուին դրամատան մէջ:
- Յօդ. 62- Թաղական Խորհուրդին բոլոր հաշիւները ենթակայ են Տնտեսական Խորհուրդին հսկողութեան եւ քննութեան:

Տնտեսական Խորհուրդը կրնայ ռեւէ ատեն հաշուեքննիչ մը ղրկել քննելու համար Թաղական Խորհուրդի հաշիւները: Եթէ ան թերացումներ նկատեալ, պէտք եղած դիտողութիւններն ու ցուցմունքները կ'ընէ: Եթէ ծանր յանցանքներ գտնէ, կը տեղեկագրէ Քաղաքական Ժողովին, որ կը տնօրինէ պարտն ու պատշաճը:

Յօդ. 63- Թաղական Խորհուրդը պարտաւոր է ընթացք տալ Տնտեսական Խորհուրդի հրահանգներուն բոլոր այն հարցերուն մէջ, որոնք կը վերաբերին խորհրդակատարութեանց սակերուն ճշդումին, մուտքերու կազմակերպութեան, ելքերու դասաւորումին եւ խնայողութեան:

Ազգային Տուրքի կազմակերպութեան եւ գանձումներուն համար Թաղական Խորհուրդը պարտաւոր է ընթացք տալ Տնտեսական Խորհուրդի որոշումներուն:

Յօդ. 64- Թաղական Խորհուրդը պարտաւոր է իր ծուխերուն ընտանեկան տախտակները կազմել եւ կանոնաւորութեամբ պահել գանոնք, օրը օրին արձանագրելով եղած փոփոխութիւնները:

## 5- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱԼՈՒԱԾՈՑ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Յօդ. 65- Թաղական Խորհուրդ մը եկեղեցոյ, կալուածներու եւ դպրոցներու վերաբերեալ հիմնական նորոգութիւններուն համար պարտաւոր է նախապէս Կալուածոց Տեսչութեան եւ Տնտեսական Խորհուրդին կարծիքը եւ հաւանութիւնը առնել:



Յօդ. 66- Մեծածախս նորոգութիւններու եւ շինութեան պարագային, Թաղական Խորհուրդը պարտաւոր է դիմել Քաղաքական Ժողովին, որուն կը ներկայացնէ շինութեան Կալուածոց Տեսչութեան կողմէ վաւերացուած թղթածրարը: Այս թղթածրարը կը պարունակէ շինութեան քարտէսը՝ պատրաստուած եւ ստորագրուած երկրաչափի մը կողմէ, նախատեսուած ծախսերու մանրամասն ցուցակ մը եւ պահանջուած գումարը գոյացնելու միջոցները:

**6- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԵՏ**

Յօդ. 67- Թաղական Խորհուրդը պարտաւոր է ընթացք տալ Դատաստանական Խորհուրդի որոշումներուն այն հարցերուն մէջ որոնք կը վերաբերին ընտանեկան դատերուն: Թաղական Խորհուրդը կը փորձէ նաեւ իր միջոցներով հարթել վեճերը, ենթականերէն մեկուն կողմէ դիմումի պարագային:

## ԳԼՈՒԽ Դ.

### ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 68- Թաղական Խորհուրդը կրնայ ամբաստանության տակ իյնալ: Ան կ'ամբաստանուի կամ իր անդամներին, կամ հոգաբարձուներին, եւ կամ Կալուածոց Տեսչութեան:

Ամբաստանության կամ բողոքի գիրը կ'ուղղուի Քաղաքական Ժողովին, որ կրնայ յանձնել համապատասխան խորհուրդին եւ կամ տեսչութեան առ ի քննութիւն, եթէ ամբաստանողը Տեսչութիւն եւ կամ Խորհուրդ չէ:

Տեսչութիւն եւ կամ Խորհուրդը նախ բացատրութիւն կը պահանջէ ամբաստանեալ Թաղական Խորհուրդին, երբ զայն գոհացուցիչ չի գտներ, քննիչ կը դրկէ եւ քննութեան արդիւնքը կը հաղորդէ Քաղաքական Ժողովին:

Քաղաքական Ժողովը կը դատէ Թաղական Խորհուրդը: Եթէ յանցանքը թեթեւ է, զայն ի կարգ կը հրաւիրէ: Եթէ ծանր է ու ապացուցուած, կը լուծէ Թաղական Խորհուրդը: Յանցաւոր անդամները վերընտրելի չեն:

Յօդ. 69- Եթէ Թաղական Խորհուրդը եւ իր Հոգաբարձութիւնը զիրար ամբաստանեն, Ուսումնական Խորհուրդը կը քննէ հարցը: Եթէ ամբաստանեալ Հոգաբարձութիւնը յանցաւոր է, Ուսումնական Խորհուրդը կրնայ զայն լուծել: Եթէ յանցաւորը Թաղական Խորհուրդն է, ան կը տեղեկագրէ Քաղաքական Ժողովին՝ ի տնօրինութիւն:

Յօդ. 70- Թաղին ընտրողները կրնան բողոքել Թաղականութեան: Իրենց բողոքը պարտին ներկայացնել Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին: Այս օրինաւոր ընթացքէն զատ, բողոքի ոեւէ այլ եղանակ օրինական չէ:

Յօդ. 71- Երբ Քաղաքական Ժողովը նկատե որ Թաղական Խորհուրդ մը իր հրահանգներուն չ'ենթարկուիլի եւ այս կանոնագրութեան տրամադրութիւնները չի յարգեր, անոր ազդարարութիւն մը կ'ընէ եւ բացատրութիւններ կը պահանջէ:

Եթէ Թաղականութիւնը յամառի իր ընթացքին մէջ, Քաղաքական Ժողովը զայն ժողովի հրաւիրելով քննութիւն կը բանայ: Եթէ յանցապարտ է՝ ի կարգ կը հրաւիրէ եւ գրաւոր ազդարարագիր կ'ուղղէ:

Եթէ Թաղական Խորհուրդը դարձեալ յամառի, Քաղաքական Ժողովը զայն կը լուծէ:

Յօդ. 72- Եթէ Թաղական Խորհուրդ մը Հայաստանեայց Եկեղեցոյ Վարդապետութեան եւ Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքներուն հակառակ ընթացքի մէջ գտնուի, կը լուծուի Քաղաքական Ժողովին կողմէ եւ վերընտրելի չէ:

Յօդ. 73- Նկատի ունենալով որ Թեմիս Առաջնորդը Ազգ. Վարչութեան եւ անոր յարակից Խորհուրդներուն ու Տեսչութեանց նախագահն է, Թաղական Խորհուրդը Ազգ. Վարչութեան եւ կամ Խորհուրդներուն ու Տեսչութեանց դրկած նամակները կ'ուղղէ Առաջնորդ Հօր, իբրեւ նախագահ համապատասխան մարմնին, որ իր կարգին թաղականութեանց կը փոխանցէ իր ստորագրութեամբ վերոյիշեալ մարմիններուն որոշումները՝ ի գործադրութիւն:

Յօդ. 74- Այս կանոնագրութիւնը գործադրութեան կը դրուի 20 Յունիս 1998 թուականէն սկսեալ:

## ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՈՒՂՂԵԳԻԾ

### Թղթածրար թիւ 1

#### *Ընդհանուր Կանոն*

- Թաղականութիւնը կը գումարէ հերթական ժողովներ:
- Որեւէ ստորագրութիւն թէ կնիքի գործածութիւն կը կատարուին երկու օրեր, Թաղականութեան ժողովի օրը եւ Կիրակի օրերը:
- Բացառիկ առիթներով կարելի է բացառիկ հանդիպումներ կազմակերպել:
- Կնիքը կը մնայ պահարանի մը մէջ, որու բանալին կը մնայ ատենապետին եւ ատենադպիրին մօտ:
- Թաղականութեան սենեակի բանալին կ'ունենայ նաեւ եկեղեցւոյ քահանան:
- Թաղականութիւնը հաշուետոմարի ստուգումը կը կատարէ հերթական դրութեամբ:
- Թաղականութիւնը հերթական դրութեամբ կը վաւերացնէ մուտքն ու ելքը:
- Հոգեհանգիստի, ժամուցի, «Տէր Ողորմեա»ի, ընծայումի, ուխտի առթիւ մազ կտրելու, բանկալի ելն. արձանագրութիւններն ու վճարումները կը կատարուին թաղականութիւններուն մօտ, փոխան ստացագիրի:
- Բանկալի պնակներէն գոյացած գումարներու ստուգումը կը կատարուի առնուազն երկու թաղականներով:
- Թէ Լիբանանեան եւ թէ Ամերիկեան Տոլարի հաշիւ ունենալ:
- Մեծագումար ծախսերու պարագային առնել Տնտեսական Խորհուրդի հաւանութիւնը:
- Տիկնանց Յանձնախումբի եւ դպրաց դասի հաշիւներն ու տետրակները կը քննէ:

## Թղթածրար թիւ 2

### *Դիւանի կազմութիւն եւ պարտականութիւն*

Թաղականներու ընտրութենէն անմիջապէս ետք, յաջորդող մէկ շաբթուան ընթացքին, Թաղականութիւնը պետք է ընտրէ իր դիւանը.- Ատենապետ, Ատենադպիր, Գանձապահ, Հաշուապահ:

Ատենապետին պարտականութիւնները.-

- Կը վարէ ժողովը.
- Կը ստորագրէ նամակները.
- Կը հետապնդէ որոշումներու գործադրութիւնը.
- Կը քննէ եւ կը ստորագրէ ելքի կտրօնները.
- Կը ստորագրէ Թաղականութեան տեղեկագրերը:

Ատենադպիրին պարտականութիւնները.-

- Կը պատրաստէ ատենգրութիւնը.
- Մէկ օրինակ կը դրկէ Ազգ. Առաջնորդարան.
- Կը գրէ, կը կնքէ ու կը ստորագրէ նամակները.
- Կը պատրաստէ անհրաժեշտ տեղեկագրերը:

Գանձապահին պարտականութիւնները.-

- Կը գանձէ դրամները փոխան ստացագրի.
- Կը կատարէ վճարումները փոխան փաստաթուղթի. (փաստաթուղթը կը կցուի ելքի կտրօնին, իսկ կտրօնին վրայ կ'երեւի գանձողին ստորագրութիւնը).
- Դրամատան հաշիւներուն կը հետեւի կանոնաւորապէս.
- Դրամատան հաշիւին պատասխանատու կ'ըլլայ ատենապետին եւ այլ ժողովական անդամի մը հետ. (3-ի անուն եւ 2-ի ստորագրութիւն բաւարար են).

- Կը ստանձնէ, կնքել կու տայ եւ գործածութեան կը դնէ Առաջնորդարանէն եկած ելքի, մուտքի ստացագրերու հաշուական տոմարները:

Հաշուապահին պարտականութիւնները.-

- Կը պահէ հաշուական տոմարները.
- Կը հետեւի գանձապահի գործունէութեան.
- Տոմարի արձանագրութիւնը կ'ընէ օրը օրին եւ ոչ թէ հաւաքական ձեւով.

Նախընտրելի է, որ թաղականութիւնը ունենայ իր գոյքապահը, որ`

- Կը ստանձնէ Առաջնորդարանէն եկած բոլոր տետրակները.
- Կնքել կու տայ (տետրակները) եւ կը դնէ գործածութեան ըստ պահանջի.
- կը պահէ պահեստը stock-ը եւ տեղեակ կը պահէ Թաղականութիւնը, եւ կը ստանձնէ stock-ի ամբողջացումը.
- Կը վերստանձնէ ամբողջացած տրցակները` ստուգումէ մը ետք.
- Կը պահէ դպրոցներու եւ եկեղեցւոյ գոյքերու inventaire-ն:

## ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

### ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍՈՒ ԹՈՇԱԿԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ

#### Թղթածրար թիւ 3

Թաղականներու, քահանաներու, Ազգային Առաջնորդարանի հանդէպ պարտաւորութեան եւ կարգ մը եկամուտներու առնչուող հարցերու համար թաղականութեանց ուշադրութեան կը յանձնուին «Քահանայից Դասու Թոշակի Դրութեան Կանոնադրութիւն»-ի հետեւեալ յօդուածները.-

- Յօդ. 13- Զրի խորհուրդի պարագային, ենթական պարտի հաստատագիր մը բերել շրջանի թաղականութենէն, ծխատէր քահանայ հօր ստորագրութեամբ:
- Յօդ. 14- Մկրտութեան, նշանախօսութեան եւ թաղման վերաբերեալ արտօնագիրները կը տրուին Առաջնորդարանի կողմէ, որուն մէկ օրինակը կը փոխանցուի ծխատէր քահանային կամ շրջանի Թաղականութեան:
- Յօդ. 16- Հոգեհանգիստի, ժամուցի, «Տէր Ողորմեա»ի, ընծայումի, ուխտի առթիւ մագ կտրելու, բանկալի, եւլն. արձանագրութիւններն ու վճարումները կը կատարուին թաղականութիւններու մօտ, փոխան ստացագիրի:
- Յօդ. 18- Հոգեհանգիստ խնդրողին նուէրը կը փոխանցուի խորհրդակատարութեանց մայր սնտուկին 55%-ով, իսկ 45%-ը թաղականութեան: Հոգե-

հանգիստի մասնակցողներուն նուէրները նոյնութեամբ կը փոխանցուին թաղականութեան սնտուկը:

Յօդ. 20- Արտօնագիրները կ'ըլլան երեք օրինակով, որոնցմէ երկուքը կը տրուին ենթակային:

ա- Ենթական առաջին օրինակը կը պահէ իր մօտ իբր ստացագիր, իսկ երկրորդը իբրեւ ստացագիր-արտօնագիր կը յանձնէ խորհրդակատարութիւնը կատարող եկեղեցիին թաղականութեան: Խորհրդակատարութեան աւարտէն ետք Թաղականութիւնը արտօնագրին վրայ կ'արձանագրէ խորհրդակատարութեան թուականը, խորհրդակատարութիւնը կատարող տաներէց քահանային անունը եւ անհրաժեշտ այլ մանրամասնութիւնները: Տաներէց քահանան արտօնագրին վրայ կ'արձանագրէ խորհրդակատարութեան մասնակցող միւս քահանայ հայրերուն անունները եւ կը ստորագրէ արտօնագիրը: Ամսուան վերջը, թաղականութիւններ Առաջնորդարան կը ներկայացնեն իրենց մօտ գտնուող արտօնագրերու պատճէնը ու կը ստանան նախորդ ամսուան վերաբերեալ իրենց նիւթական իրաւունքը:

Յօդ. 29- Բոլոր քահանայ հայրերը եւ երէցկիները ապահովագրուած են արկածի եւ հիւանդանոցային ծրագրով:-

ա- Քահանայ հայրերը կը մասնակցին 25%-ով, թաղականութիւնները կը հոգան 75 %-ը:

Յօդ. 31- Բանկայի (մումի պնակ, եկեղեցւոյ պնակ, նուէր եկեղեցւոյ հոգեհանգիստի մասնակցողներու) գումարները կը փոխանցուին թաղականութեանց:

Յօդ. 32- Խորհրդաժկատարութեանց մայր սնտուկէն վարչական ծախսերը հանելէ յետոյ (պաշտօնեայի թոշակները, գրենական եւ տպագրական ծախսերը)



55%-ը կը տրուի քահանայ հայրերուն քահանայից սնտուկ եւ 45%-ը թաղականութեանց:

Յօդ. 48- Թաղական Խորհուրդները եթէ դժգոհ են քահանայ հօր աշխատանքէն, կրնան բողոքել Առաջնորդ Հօր: